ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"09" հոկտեմբերի 2012թ № 126 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի <<բ>> և 1.13 կետի <<դ>> ենթակետերի դրույթներով, 2011-2012 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից մարզին հատկացված բյուջետային միջոցների օգտագործման նպատակայնությունը և արդյունավետությունն ուսումնասիրելու նպատակով որոշում եմ՝

1. Հաստատել 2011-2012 թվականներին մարզում իրականացված քաղաքաշինական ծրագրերի կատարման որակը, օգտագործված միջոցների նպատակայնությունը և արդյունավետությունն ուսումնասիրող հանձնաժողովի կազմը /համաձայն հավելվածի/:
2. Հանձնաժողովին՝ կատարել համապատասխան ուսումնասիրություններ և արդյունքները մեկամսյա ժամկետում ներկայացնել քննարկման:
3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 9
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
9 հոկտեմբերի 2012թ.
N 126-Ա որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Արա Դոլունց - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ, նախագահ
2. Արշակ Ուստաբաշյան - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, տեղակալ
3. Լևոն Ներսիսյան – Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության տարածքային բաժնի պետ /Համաձայնությամբ/
4. Մելս Բարխուդարյան – <<Որոտանի ՀԷԿ-երի համալիր>> ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ /Համաձայնությամբ/
5. Համապատասխան համայնքի ղեկավար - /Համաձայնությամբ/
6. Ռազմիկ Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ, պատասխանատու ստորաբաժանման ղեկավար
7. Սարիկ Աղաբեկյան - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճանապարհաշինության և տրանսպորտի բաժնի պետ, պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան